„Ушарар„—"Суфлеръ„
Художеств.-литератур: сборникъ
М. Мерабовой

Գինն է 10 կոպ. կամ 60 փարա.

# ՅՈՒՇԱՐԱՐ

## Թատերական-գրական-գեղարուեստական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Կիրակի նոյեմբեր 23 ԵՐԿՐՈՐԴ 1908 ՏԱՐԵՇՐՋԱՆ № 8

«Ցուշարար»-ի բաժնեգինն է տարեկան (20 պատկերազարդ համար և 10 պիէս) 5 բուբ. արտասահման՝ 6 ր.—15 ֆր. Ամերիկա 3 դոլլար, Թիւրքիա՝ 60 ղուրուշ։ Թիւրքիոյ բաժանորդները պէտք է դրամը փոխադրեն բանկ Օսմանի փոխանակագրերով։ Նոր բաժանորդները կը ստանան թերթի բոլոր լոյս տեսած համարներն ու յաւելուածները։ Դիմել՝ Тифлисъ, редакція „УШАРАРЪ" Нинѣ Врюйръ, կամ Tiflis, Redaction de la revue „Houcharar" Nina Vrouyre։ Անձամբ գործ ունեցողները պէտք է դիմեն Թիֆլիս, Բէհբութեան փող, 20 կամ Բագու «Տրուդ» տպարան։

Այս համարի հետ միմիայն բաժանորդներին ուղարկուում է «Ցուշարար»-ի երրորդ յաւելուածը «ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐ» պիէսը Բ.—Բիերնսոնի 2 արարուածով։

† Վ. ՄԵԼԻՔ-ՅՈՎՍԷՓԵԱՆ

Այրուած Սբյզրանի թատրոնում յուլիսի 22-ին

«Ցուշարար»-ի հրատարակութեան բէ աւելի կատարելագործման, եւ թէ թերթի Բագու տեղափոխելու պատճառով հերթական համարը ուշացաւ, որի համար խմբագրութիւնս իր ժամանողների հերոպամտութիւնն է խնդրում.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ցածկաստանի վերահաստատուած սահմանադրութիւնը.—Լեզուի խնդիրը.—Լինում են ժամեր...—Ճարտարապետ Թ. Թորամանեանը գնահատուած Ս. Պ.-Բուրգի Կայս. գիտութեան ձեմարանից.—Ռախմանինով-Կայիլ.—Ռէժիսէօրների համաժողովը Մոսկվայում.—Ինչպէս են պարապում արտիստները.—Ես հիւր եմ կեանքում.—«Ցուշարար»-ի Թղթակիցներից. Ղազին, Գորիս, Անի.—Մահացուցակ.—Սև շուշան.—1908—909 Թատերաշրջան.—Թատր. քրոնիկ.—Լուրեր.—Պոստ-արկղ.—Նոր ստացուած գրքեր.—Ցայտարարութիւններ։ Պատկերներ.—Տ. Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեան.—Վ. Մելիք-Յովսէփեան.—Մարկոս Աղաբէգեան.—Տիկին Սիրանոյշ.—Մուրացան։—Կամս Լև Տոլստոյ։

նպիրը կրող բաժանմունքն էր, որտեղ նկարեցին ու երգեցին «Արիք հայկազունք», «Մեր հայրենիք», «Մայր Արքսի» և այլն, ու երկու պարսկական եղանակներ (վերջին երկուսը հասարակութեան խնդրանքով)։ „Восточный“ է այս կոնցերտը. կոմմենտարեաններն ասելորդ են։ Միմիայն թատրոն Խան-Սիւնին այդ երկու պարսկական եղանակով ապացուցեց որ ինքը աշուղ չէ, այլ արտիստ։

Կարգապահութիւնը խիստ վատ էր, մանաւանդ որ իրանք սիրողները նոյն իսկ կուլիսների արանքով ֆիֆթակի նման միշտ անց ու դարձ էին անում։ Բեմի նակի աղմուկը բաղնիսն էր յիշեցնում։

Անցորդ

IV

Անի, 27 հոկտեմբերի

Մայր եկեղեցու հիւսիս-արեւմտեան ճեղքուած անկիւնի տակ գտնուող թումբը վանահայր Միքայէլ վարդապետը օրերումս պեղել սկսաւ, և յայտնուեց մի վերին ատիճանի հետաքրքիր հնութիւն։ Բացուեց մի փոքրիկ քարաշէն սենեակ համակ սև ու կարմիր քարից մոզայիքներով և այդ բոլորը այնքան անաղարտ՝ որ կարծես վարպետը միջից նոր գուրս եկած լինի։ Սենեակի առաստաղը խաչաձև կամարակապ է, և քիչ վնասուած խոնաւութիւնից։ Մուտքը վերին ատիճանի վայելուչ, բայց ճակատի մի փոքրիկ մասը թափուած։ Սենեակի յատակում մի ջրի կարաս կայ թաղուած և մէջը կրով ծեփած՝ անշուշտ շինութեան պատերը խոնաւութիւնից պահպանելու համար։ Այս սենեակը մինչև այժմ մեղ ծանօթ չէնքերից ամենից աւելի անաղարտ մնացածն է։

Ը նայելով որ ձիւնը պատած է ամեն կողմ, ճարտարապետ պ. Թորամանեան եռանդով գործում է։ Վերջերս ուարտել է կարծեցեալ Բեխենց վանքի և Ախուրեանի կամուրջի վերակազմութիւնները, և այժմ զբաղուած է պարսպի գլխաւոր մուտքերի յատակագիծները հանելով։

Օրերս կը մեկնի Տիկար։ Ա.

# ՄԱՀԱՑՈՒՑԱԿ

## ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ

—

Վախճանուեց Կ. Պոլսում օգոստոսի 4-ին։ Մեր վերածնութեան շրջանի այս աչքի ընկնող դէմքը եկաւ Գովկաս Մատթէոս կաթուղիկոսի հետ, և խմբագրում էր «Կռունկ» ամսագիրը՝ առաջադիմական ուղղութեամբ։ Նրա շուրջն էին համախմբած Գարեգին (յետոյ Մելիքսեդէկ եպիսկոպոս) Մուրադեանց, Գերճ Գուշեանց, Հ. Էնֆիաջեանց և ուրիշներ։ Միևնոյն ժամանակ սերտ մասնակցութիւն ունէր 60-ական թուականների սկզբում Թիֆլիսում կազմակերպուած դերասանական խմբին՝ իբրև ռէժիսէր։ Նոյն թուականների վերջին հեռացաւ Կ. Պոլիս և հրատարակում էր «Ծիրն Աւարայրի» հանդէսը. Ունի նաև բազմաթիւ հրատարակութիւններ պատմական-հասարակական բովանդակութեամբ։ Գրած է նաև մի ընդարձակ հայոց պատմութիւն։ Բաւական երկար ժամանակ եղած է թուրք կառավարութեան ծառայութեան մէջ։ Վերջերս քաշուած կեանք էր վարում։

—

Հանգուցեալի կեանքից հետեւալ դէպքն են պատմում։ Աղէքսանդր Երիցեանը գրում է մի պիէս, որի վերջին գործողութեանը բոլոր գործող անձինք մեռնում են։ Դերակատարներից մէկը լինում է Սոֆիա Իզմիրլեանցը, որ տեսնելով իր շուրջը գտնուող խաղացողներից բոլորը մեռան, դիմում է Մ. Աղաբէգեանին.

—Ե՞ս ինչ անեմ։

—Դուն էլ մեռիր, պատասխանում է Աղաբէգեան։

Այդ օրանից Ա. Երիցեանը երգում է այլևս պիէս չգրել։

## ՄՈՒՐԱՑԱՆ

(Դր. Տէր-Յովանէսեանց)

—

Որ ծանօթ էր ռուսահայ գրականութեան մէջ, վախճանուեց օգոստոսի 30-ին Թիֆլիսի Միքայելեան հիւանդանոցում։ Շուշու թեմական դպրոցը աւարտելուց յետոյ զբաղուում էր գրականութեամբ, և իր առաջին վաստակներից մէկն էր «Ռուզան» ողբերգութիւնը՝ որ գրեց ողբերգած 1880 թ. Թիֆլիսում գործող դերասանական խմբի ազդեցութիւնից։ Իր բոլոր ազատ ժամանակը նա նուիրել է գրականութեան և աշխատակցել «Մեղու Հայաստանի», «Նոր-Դար», «Արձագանք» և «Լումայ» պարբերականներում մի շարք պատմական վէպերով և կեանքի պատկերներով։ Նրա «Ռուզան» ողբերգութիւնը, մեր «ազգային» կոչուող պիէսներից տարբերուում է իր հերոսուհու նկարագրով։ Մուրացան ուզեցաւ այդ պիէսի թերութիւնները ուղղել, բայց չյաջողուեց, և այդ եղաւ նրա միակ թատերական գրուածքը։

## ՎԱՐԴԱՆ ՄԵԼԻՔ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

—

Սբյղբանում (Վոլգայի վրայ) յուլիսի 22-ին մի զարհուրելի արկածի զոհ եղաւ։

Խումբը ներկայացնում էր Հաուպտմանի «Խոբասուզուած զանգ» պիէսը. Մելիք-Յովսէփեան, խաղում էր անտառի ոգու դերը։ Չորրորդ արարուածի միջոցին կառավարում էր լուսնի լոյսը, որ անյարմարութիւնների պատճառով փոխարինուած էր վելոսիպեդի ացէտիլինի լապտերով։ Կամենալով բեմից վերցնել լուսաւորութիւնը—անշուշտ մոռանալով թէ ինչ դիրքում նիւթից էր հագուստը (կանեփից էր, որ բուրդ էր ներկայացնում) լապտերի ապակիի կողով կրծքին սեղմեց։ Կանեփը վառուեց և մի ակընթարթից յետոյ նա այրուում էր ինչպէս մի կենդանի ջահ։ Թատրոնում ջուր չկար։ Վայր գլորեցին